Տպագրված է ընդամենը 5 օրինակ
ՕՐԻՆԱԿ 3

<ՀԱՍՏԱՏՎԱԾ Է>
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ
2013թ. ---------------- -ի
թիվ ------------ հրամանով

Նախարար ---------------- Ա. Ասատրյան

<ԳՐԱՆՑՎԱԾ Է>
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ՆՈՐ ՆՈՐՔԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ 26.05.2003թ
գրանցման թիվ 282.210.04711
վկայական 03Ա060292 ՀՎՀՀ 00801231
<26.05.2003թ գրանցված
կանոնադրությունը>
Թիվ 001 3 փոփոխությունը
<ԳՐԱՆՑՎԱԾ Է> ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ
ԿՈՂՄԻՑ 22 ------, --04---2013թ.

---------------- Տ/Բ պետ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
<ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ <ԵՐԵՎԱՆԻ <ԶԱՏԻԿ> ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

I. Ընդհանուր դրույթներ

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության <Երևանի <Զատիկ> երեխաների աջակցության կենտրոն> պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող կազմակերպություն է: /282.210.04711/

2. Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

3. Կազմակերպությունը ստեղծված է համարվում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:

4. Կազմակերպության գործունեությունը ֆինանսավորվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների կազմակերպությունների և ֆիզիկական անձանց նվիրատվություններից, բարեգործական նպատակներով տրամադրվող միջոցներից, իր կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեությունից և օրենքով չարգելված այլ գործունեությամբ ստեղծված միջոցներից:

5. Կազմակերպությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, իր անունից կարող է կնքել պայմանագրեր, ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

6. Կազմակերպությունը այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

7. Հիմնադիրը պատասխանատու չէ կազմակերպության պարտավորությունների համար, իսկ կազմակերպությունը իր հիմնադրի պարտավորությունների համար:

8. Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով և իր անվամբ կլոր կնիք ու դրոշմակնիք, ինչպես նաև ձևաթղթեր:

9. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, հաշվարկային հաշիվ բանկերում՝ Հայաստանի Հանրապետության արժույթով և արտարժույթով:

10. Կազմակերպությունը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները հաշվարկում և վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափերով:

11. Կազմակերպությունը գտնվում է հատուկ կառուցված շենքում, որը համապատասխանում է սանիտարահիգիենիկ, հակահրդեհային և անվտանգության տեխնիկայի պահանջներին և ունի երեխաների կյանքի և կենցաղի համար անհրաժեշտ բարեկարգ պայմաններ:

12. Կազմակերպության գտնվելու վայրն է. Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Զաքարիա Սարկավագի 145ª:

13. Կազմակերպության անվանումն է՝

հայերեն լրիվ՝ <Երևանի <Զատիկ> երեխաների աջակցության կենտրոն> պետական ոչ առևտրային կազմակերպություն,
հայերեն կրճատ՝ ԵԶԵԱԿ
ռուսերեն լրիվ՝ " **Ереванский Центр поддержки детей ,,Затик" Государственная некоммерческая организация**
ռուսերեն կրճատ՝ ԵՑՊԴՁԳՀՈ
անգլերեն լրիվ՝ **"Yerevan child support centre ,,Zatik" State non Commercial Organization**
անգլերեն կրճատ՝ **YCSCZSNCO**:

II. Կազմակերպության գործունեության առարկան, նպատակը և գործառույթները

14. Կազմակերպության գործունեության նպատակն է ապահովել՝

1) Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 3-18 տարեկան երեխայի առավելագույնը 6 ամիս ժամկետով շուրջօրյա խնամքը,
2) Կյանքի դժվարին իրավիճակում հայտված 6-18 տարեկան երեխայի տարվա ընթացքում ցերեկային խնամքը:

15. Կազմակերպության գործունեության առարկան է՝

1) Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 3-18 տարեկան երեխայի և նրա ընտանիքի անդամների հետ սոցիալհոգեբանական վերականգնողական աշխատանքների իրականացումը,
2) երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն աջակցելը,
3) նյութական ու կենցաղային պահանջների բավարարումը,
4) խնամքի և դաստիարակության ապահովումը,
5) կրթությանն ու դաստիարակությանն օժանդակելը և առաջին բժշկական օգնության ծառայության, խնամքի ապահովումը՝ մինչև երեխային ծնողին վերադարձնելը կամ երեխայի նկատմամբ խնամակալ կամ հոգաբարձու նշանակելը, իսկ դրա անհնարիության դեպքում՝ մանկատանը տեղավորելը,
6) 6-18 տարեկան կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի և նրա ընտանիքի անդամների սոցիալհոգեբանական վերականգնողական աշխատանքների իրականացումը, երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն աջակցելը:

16. Կազմակերպությունն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 3-18 տարեկան երեխայի մինչև 6 ամիս ժամկետով շուրջօրյա խնամքի մասով.

ա. կազմակերպում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքում կոնֆլիկտներ ունեցող, դաժան վերաբերմունքի ենթարկված, բռնության ենթարկված, հակասոցիալական վարք դրսևորած, այդ թվում՝ մուրացիկ, թափառաշրջիկ, սոցիալապես անապահով կամ անօթևան ընտանիքների, դժբախտ պատահարի ենթարկված կամ արտակարգ իրավիճակում

հայտնված, սոցիալապես մեկուսացված 3-18 տարեկան երեխաների ընդունելությունը,

բ. կազմակերպում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 3-18 տարեկան երեխաների ժամանակավոր /մինչև 6 ամիս/ շուրջօրյա խնամքը,

գ. կատարում է երեխայի կարիքների գնահատում, որին համապատասխան իրականացնում սոցիալ հոգեբանական վերականգնողական ծրագիր,

դ. կազմակերպում է երեխայի կենցաղային սպասարկումը, ապահովում է նրանց համապատասխան խմբասենյակներով, անկողնային պարագաներով, հագուստով, կոշկեղենով,

ե. ապահովում է համապատասխան սննդով՝ ելնելով երեխայի տարիքից և առողջական վիճակից,

զ. կազմակերպում է երեխայի ուսումը հանրակրթական դպրոցում,

է. կազմակերպում է մասնագետ բժիշկների, շուրջօրյա բժշկական սպասարկում, անհրաժեշտության դեպքում՝ դիսպանսերիզացում և հոսպիտալացում,

ը. աշխատանքներ է իրականացնում ընտանիքը կամ հաստատությունը լքած երեխայի հետ, կազմակերպում նրա ժամանակավոր խնամքը և վերադարձը ընտանիք կամ այլ հաստատություն,

թ. խնամակալության և հոգաբարձության մարմնի հետ համատեղ քննարկում, է երեխային ծնողներին վերադարձնելու կամ նրանցից առանձնացնելու խնդիրները,

ժ. համագործակցում է երեխաների հիմնախնդիրներով զբաղվող պետական և հասարակական կազմակերպությունների հետ,

ժա. ապահովում է սանիտիգիենիկ, հակահամաճարակային միջոցառումների իրականացումը,

ժբ. կազմակերպում է աշխատանքներ՝ ուղղված աշխատակազմի որակավորման բարձրացմանը,

ժգ. պահպանում է երեխայի սեփականություն հանդիսացող գույքը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2) 6-18 տարեկան կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի ցերեկային խնամքի ապահովում

ա. ծնողի /ծնողների/ դիմումի համաձայն կազմակերպում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների ընդունելությունը,

բ. հայտնաբերում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին,

գ. իրականացնում է այդ երեխաների և նրանց ընտանիքների տունայց, կատարում նրանց կարիքների գնահատում,

դ. տրամադրում է երեխային և նրա ընտանիքին սոցիալտնտեսական, սոցիալհոգեբանական, սոցիալմանկավարժական, սոցիալբժշկական, իրավական և սոցիալական այլ ծառայություններ,

ե. ապահովում է կազմակերպություն հաճախող երեխային մեկանգամյա սնունդով, տրանսպորտից օգտվող շահառուներին տրամադրում է ճանապարհածախս, իսկ շահառուներին տրամադրում հագուստ և գրենական պիտույքներ:

Կազմակերպության աշխատակիցներին տնային և համապատասխան կառույցներ այցելություններ կատարելու նպատակով տրամադրում է ճանապարհածախս,
զ. իրականացնում է սոցիալհոգեբանական վերականգնողական ծրագրեր՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների համար,
է. իրականացնում է սոցիալհոգեբանական վերականգնողական աշխատանքներ ֆիզիկական և մտավոր խնդիրներ ունեցող երեխաների համար,
ը. աշխատանքներ է իրականացնում հանրակրթությունից դուրս մնացած կամ կրթական խնդիրներ ունեցող երեխաների հետ,
թ. իրականացնում է կանխարգելիչ աշխատանքներ՝ հսկողությունից դուրս մնացած անչափահասների հետ, պաշտպանում նրանց իրավունքները և շահերը,
ժ. իրականացնում է սոցիալական պատրոնաժ՝ սոցիալական աջակցության ու վերականգնման կարիք ունեցող երեխաների և նրանց ընտանիքների հետ,
ժա. համագործակցում է երեխաների հիմնախնդիրներով զբաղվող պետական և հասարակական կազմակերպությունների հետ,
ժբ. աջակցում է երեխաների մասնագիտական կողմնորոշմանը, զարգացնում է աշխատանքային հմտություններ՝ արհեստների ուսուցանման միջոցով,
ժգ. աջակցում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների ամառային հանգստի կազմակերպմանը,
ժդ.կազմակերպում է երկարատև հիվանդ կամ մանկուց հաշմանդամ երեխաների ծնողների համար ծնողավարման հմտությունների դասընթացներ,
ժե. կազմակերպում է մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացմանն ուղղված միջոցառումներ՝ հաստատության մասնագետների համար,
ժզ. իրականացնում է իրազեկման աշխատանքներ՝ ուղղված երեխայի ընտանիքում /ծնողների, խնամակալների, խնամատար ծնողների, որդեգրողների հետ/ ապրելու ուղղությամբ,
ժէ. կազմակերպում է աշխատանքներ՝ ուղղված անձնակազմի որակավորման բարձրացման ուղղությամբ:

III. Կազմակերպության ձեռնարկատիրական գործունեությունը

17. Կազմակերպությունն իր հիմնական գործունեությանը զուգընթաց կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝
1) սոցիալական վճարովի ծառայությունների մատուցում,
2) փայտե արտադրատեսակների արտադրություն,
3) թղթից և ստվարաթղթից այլ արտադրատեսակների (բացիկների) արտադրություն:
Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով կազմակերպությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա:
18. Կազմակերպության ձեռնարկատիրական գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար՝ հիմնադրի սահմանած կարգով:
19. Կազմակերպությունը կարող է ունենալ հիմնարկներ, ներկայացուցչություններ կամ մասնաճյուղեր, որոնք ստեղծվում են հիմնադրի որոշմամբ:

IV.Կազմակերպության կառավարումը

20. Կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը, գործադիր մարմինը՝ տնօրենը:

21. Կազմակերպության ընդհանուր կառավարումն իրականացնում է հիմնադրի կողմից լիազորված պետական մարմինը (այսուհետ՝ լիազորված պետական մարմինը): Լիազորված պետական մարմինը՝

1) ապահովում է կազմակերպության բնականոն գործունեությունը և պատասխանատվություն կրում դրա չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար,
1) հաստատում է կազմակերպության եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը,
2) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով կազմակերպության տնօրենի ներկայացմամբ հաստատում է կազմակերպության կառուցվածքը և աշխատողների թիվը, ինչպես նաև համաձայնություն է տալիս կազմակերպության տնօրենի տեղակալի և գլխավոր հաշվապահի թեկնածուների վերաբերյալ,
3) իրականացնում է կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողություն,
4) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում կազմակերպության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները,
5) լսում է կազմակերպության գործունեության մասին հաշվետվությունները, քննում է նրա գործունեության վերստուգման արդյունքները, հաստատում կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը,
6) վերահսկողություն է իրականացնում կազմակերպությանն ամրացված պետական սեփականության օգտագործման ու պահպանման նկատմամբ,
7) վերահսկողություն է իրականացնում կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, համաձայնություն է տալիս կազմակերպության գույքը օգտագործման կամ վարձակալության հանձնելու համար,
8) իրականացնում է <Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին> Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

22. Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, ում պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է լիազորած պետական մարմինը:

23. Կազմակերպության տնօրենին պաշտոնի նշանակելն ու պաշտոնից ազատելը իրականացվում է <Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին> Հայաստանի Հանրապետության օրենքով:
24. Տնօրենի հետ կնքվում է պայմանագիր, որը հիմնադրի անունից ստորագրում է լիազորած պետական մարմնի ղեկավարը:
Պայմանագրով սահմանվում են տնօրենի իրավունքները, պարտավորությունները, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները լիազորած պետական մարմնի հետ, նրա աշխատանքի վարձատրության պայմանները, պայմանագրի դադարեցման օրենքով նախատեսված բոլոր հիմքերը և օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված պարտադիր պայմաններ, ինչպես նաև այլ դրույթներ, որոնք անհրաժեշտ կգտնեն պայմանավորվող կողմերը: Պայմանագրի դրույթները չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության պահանջներին:
25. Տնօրենը պատասխանատվություն է կրում օրենքների, այլ իրավական ակտերի, հիմնադրի կամ լիազոր պետական մարմնի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:
26. Տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:
27. Տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով կազմակերպությանը և /կամ/ պետությանը պատճառած վնասի համար: Նրա լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունը չկատարելու համար:
28. Տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում է պայմանագրեր,
2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի և լիազորած պետական մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները,
3) տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,
4) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում կազմակերպության աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,
5) նախքան պաշտոնի նշանակելը՝ լիազորված պետական մարմնի հետ համաձայնեցնում է կազմակերպության տնօրենի տեղակալի և գլխավոր հաշվապահի թեկնածությունները,
6) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,
7) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև,

8) լիազորած պետական մարմնի հաստատմանն է ներկայացնում կազմակերպության կառուցվածքը, աշխատողների թիվը, ներքին կարգապահական և այլ կանոնները,
9) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
10) սահմանված կարգով լիազորված պետական մարմին է ներկայացնում կազմակերպության եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը,
11) հաստատում է ձեռնարկատիրական գործունեության եկամուտների և ծախսերի նախահաշիվը,
12) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:

29. Տնօրենի բացակայության ժամանակ, տնօրենի լիազորություններն իրականացնում է պետական լիազորված մարմնի գրավոր որոշման համաձայն նշանակված այլ անձ:

30. Կազմակերպության աշխատողների իրավունքները և պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ, կոլեկտիվ պայմանագրով, կազմակերպության աշխատանքային ներքին կանոնակարգով և այլ իրավական ակտերով:

V. Կազմակերպության սեփականությունը

31. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված ու ձեռք բերված գույքից:

Կազմակերպության գույքի ձևավորման աղբյուր կարող են հանդիսանալ նաև Հայաստանի Հանրապետության ու օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց կատարած ներդրումները, այդ թվում բարեգործական, նպատակային հատկացումներն ու նվիրատվությունները, կտակած գույքը:

32. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքների, հիմնադրի կողմից լիազորված պետական մարմնի որոշումների և սույն կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքն ու ֆինանսական միջոցները:

33. Կազմակերպության սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ հիմնադիրը չունի իրավունքներ, բացառությամբ կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:

34. Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է կազմակերպությունը:

35. Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

VI. Կազմակերպության ամրացված գույքը

36. Հիմնադրի որոշումով կազմակերպության անժամկետ ու անհատույց օգտագործման իրավունքով ամրացվում է ցանկացած գույք:
37. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից կազմակերպության ամրացված գույքը:
38. Կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:
39. Հիմնադրի կողմից կազմակերպության ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման գույքի նկատմամբ կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

VII. Կազմակերպության կարիքների համար գնումների կազմակերպումն ու իրականացումը

40. Կազմակերպությունն իր կարիքների համար գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումները կատարում է <Գնումների մասին> Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված ընթացակարգերով:

VIII. Վերահսկողությունը կազմակերպության գործունեության նկատմամբ

41.Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը ենթակա է վերստուգման /աուդիտի/՝ լիազորված պետական մարմնի ներքին աուդիտի բաժնի կողմից:

IX. Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը

42. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:
Կազմակերպությունը դատական կարգով կարող է վերակազմակերպվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով:
43. Կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

44. Կազմակերպությունը կարող է լուծարվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Այն կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով:
45. Կազմակերպությունը դատական կարգով կարող է լուծարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:
46. Կազմակերպության լուծարման դեպքում նրա պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե: